[295311]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«04» մարտի 2018 թ. N 49-Ա/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի N 47-Ա/1 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով, 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 14-ի N 1821-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի փետրվարի 15-ի N 163-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության աշխատանի և սոցիալական հարցերի նախարարի 2015 թվականի մարտի 16-ի ««Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2005 թվականի մարտի 16-ի N 47-Ա/1 հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 47-Ա/1 հրամանով հաստատված «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) կանոնադրության 12-րդ և 16-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Ա.ԱՍԱՏՐՅԱՆ

Հավելված
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի
նախարարի 2018 թ. 04 մայիսի N 49-Ն հրամանի

1. Կազմակերպության կանոնադրության 12-րդ և 16-րդ կետերը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

«12. Տուն-ինտերնատի գտնվելու վայրն է Հայաստանի Հանրապետություն, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Անդրանիկի փողոց 4-րդ, նրբանցք 1:

16. Կազմակերպությունը իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) վճարովի կամ համավճարով խնամքի, կենցաղային սպասարկման, սոցիալ-հոգեբանական օգնության, խնամքի հետ կապված այլ ծառայությունների մատուցում, այդ թվում՝ բժշկական հաստատություններում, ազատ ժամանցի կազմակերպում, ընկերակցում տարբեր վայրեր այցելելիս կամ զբոսանքների ժամանակ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 27-ի N 1112-Ն որոշմամբ սահմանված կարգի,

2) հացահատիկային և տեխնիկական մշակաբույսերի աճեցում, հացի, ալյուրե հրուշակեղենի, մակարոնեղենի ու համանման ալյուրե արտադրատեսակների արտադրություն և վաճառք,

3) բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի արտադրություն, սերմերի, սածիլների աճեցում և վաճառք,

4) պաշտպանված գրունտում արտադրության կազմակերպում,

5) անասնապահություն (այդ թվում՝ մորթատու կենդանիների բուծում), թռչնաբուծություն, մեղվապահություն, ձկնաբուծություն, ձկնեղենի ապխտում և վաճառք,

6) կաթնամթերքի արտադրություն, վերամշակում և վաճառք,

7) արևային էներգիայի արտադրություն և վաճառք,

8) գորգեղենի, ձեռագործ ապրանքների, փայտե արտադրատեսակների ու հուշանվերների, կարի արտադրություն և վաճառք,

9) այգեգործություն և դրա արդյունքում ստացված բերքի վաճառք, մրգի վերամշակում և վաճառք:»: